

Պ-198-29.01.2013,12.03.2013-ԱՄ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) օգտվել վերարտադրողականության նոր տեխնոլոգիաներից, ներառյալ՝ պտղաբերության կարգավորման ապահով և արդյունավետ մեթոդներից, ինչպես նաև անպտղության բուժման համար կիրառվող վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից:

Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգը և շահառուներին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Յուրաքանչյուր ոք ունի սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված՝

կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական այլ իրավունքներ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

	Առաջարկության հեղինակը	Նախագծի փոփոխվող մասը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր՝ Ա. Բաբլոյան	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով այն, որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հավասար իրավունքներ կանանց և տղամարդկանց համար, առաջարկում ենք նախագծից հանել 1-ին հոդվածով առաջարկվող լրացումը և խնդրի միասնական կարգավորման համար նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող լրացումը կատարել օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում:	<p>Առաջարկն ընդունված է՝ նախագիծը վերախմբագրվել է հետևյալ կերպ.</p> <p>«Հոդված 1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«8) օգտվել վերարտադրողականության նոր տեխնոլոգիաներից, ներառյալ՝ պտղաբերության կարգավորման ապահով և արդյունավետ մեթոդներից, ինպես նաև անպտղության բուժման համար կիրառվող վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից:</p> <p>Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգը և շահառուներին ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:</p> <p>Յուրաքանչյուր ոք ունի սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված՝ կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական այլ իրավունքներ:»:</p> <p>Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014թ. հունվարի 1-ից:</p>